GEFF Green Economy Financing Facility

European Bank for Reconstruction and Development

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԵԼՔ Է ԱՊՐՈՒՄ, GEFF-Ի ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ՝ ՆՈՒՅՆՊԵՍ

GEFF-ի կանաչ ֆինանսավորումը շահեկան է՝ անկախ Ձեր կազմակերպության չափերից

Դոնորներ՝

GREEN CLIMATE FUND

CIF CLIMATE INVESTMENT FUNDS

Դուք ունեք հյուրանոց, ռեստորան, հանրային սննդի կամ հյուրընկալության ոլորտի այլ բիզնես: էներգիայի ծախսերը կազմում են Ձեր բիզնեսի ծախսերի շոշափելի մասը: Ցանկանո՞ւմ եք նոր ներդրման միջոցով բարելավել սարքավորումները կամ շենք-շինության պայմանները՝ առավել մրցունակ ու շահութաբեր դառնալու նպատակով:

ՎԶԵԲ-ի Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագիրը (GEFF) էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ֆինանսավորել է շուրջ 5 մլրդ եվրո՝ ավելի քան 202,000 ներդրումային նախագծերում: Այս ներդրումներից օգտվել են ոչ միայն բիզնեսները և տնտեսությունը, այլ նաև կրճատվել է տարեկան ավելի քան 9 մլն տոննա ածխաթթու գազի արտանետում:

ՎԶԵԲ-ի կանաչ տնտեսության զարգացման մոտեցումն է բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաների և GEFF-ի ֆինանսավորման համադրումը տեղական շուկայում:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ GEFF-Ի ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Ծրագրի մասնակից յուրաքանչյուր երկրի համար, GEFF-ը ուսումնասիրել է լայնորեն կիրառվող տեխնոլոգիաները և սահմանել արդյունավետության նվազագույն ցուցանիշներ, որոնք տվյալ երկրի համար միջինացված չափորոշիչներից բարձր են առնվազն 20%-ով: Այսպիսի տեխնոլոգիաների ֆինանսավորման գործընթացը հեշտացնելու համար, կիրառվում է տեխնոլոգիաների համապատասխանության ստուգման երկու մոտեցում՝

I. **Նախապես հաստատված տեխնոլոգիաներ և նյութեր,** որոնք առկա են տեղական շուկայի համար նախատեսված
Կանաչ տեխնոլոգիաների ցանկում՝ techselector.com/armenia

- Գազի կաթսաներ
- Հովացնող սարքեր, օր.՝ ջրային ու օդային հովացմամբ չիլլերներ
- Ջերմային պոմպեր, օր.՝ օդային, ջրային և երկրաջերմային աղբյուրներից սնվող
- Արևային պանելներ, արևային ջրատաքացման համակարգեր
- Շարժիչներ ու պոմպեր, օր.՝ շրջանառու և ճնշումային պոմպեր
- Ջերմամեկուսացում սկսած 50մմ-ից
- Ջերմամեկուսիչ պատուհաններ և դռներ
- Լուսավորում, օր.՝ LED լամպեր

II. Բիզնեսի էներգախնայողության հնարավորությունները համալիր կերպով բացահայտելու համար՝ հնարավոր է օգտվել ներդրման համապատասխանության **գնահատման ծառայությունից,** որը հաճախորդների համար անվճար է, քանի որ ֆինանսավորվում է Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) կողմից:

ԻՆՉՈՒ Է GEFF-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱՎԻՉ

GEFF-ը Հայաստանում ծրագրի գործընկեր ֆինանսական կառույցները մշտապես ձգտում են ապահովել՝

I. երկարաժամկետ ֆինանսավորում՝ կարճաժամկետ դրամական հոսքերն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով,

II. տեղական ու արտարժույթով ֆինանսավորում մրցունակ պայմաններով,

III. լիզինգի հնարավորություն, որն այլ օգուտներից բացի, չի ենթադրում գրավադրում:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ GEFF-Ի ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋԵՐՍ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՄԱՆ ՕՐԻՆԱԿ

«2003թ. բացված Ավան Մարագ Ծափաթաղ Հյուրանոցը, որը գտնվում է Սևանա լճի ափին հարող գյուղական համայնքում, ի սկզբանե միացած չի եղել գազի մատակարարման ցանցին, քանի որ խողովակաշարի կառուցումը տնտեսապես նպատակահարմար չէր: Դա էր պատճառը, որ հյուրանոցը գործում էր ապրիլից մինչև հոկտեմբեր: Իսկ ձմեռային ամիսներին հյուրանոցի ջեռուցման նվազագույն մակարդակը ապահովվում էր դիզելային կաթսաներով:

Զբոսաշրջության պահանջարկի աճը, հյուրանոցի սեփականություն հանդիսացող հողատարածքների առկայությունը, ինչպես նաև GEFF-ի ֆինանսավորումը, մեզ դրդեցին ևս մեկ անգամ վերանայել իրավիճակը: Որոշեցինք երկարաձգել հյուրանոցային սեզոնը, միաժամանակ նվազեցնել գործառնական ծախսերը՝ կառուցելով արևային կայան և անցնելով էլեկտրական ջեռուցման»:

Ալբերտ Անտոնյան, Ֆինանսական տնօրեն
«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ
Ներդրման տեսակ՝ 499.5 կՎտ դրվածքային հզորությամբ PV կայան
Ներդրման արժեք՝ US$ 410,000
էներգախնայողություն՝ 144 ՄՎտժ/տարի
Դիզելային վառելիքի խնայողություն՝ 730 ՄՎտժ/տարի
CO_2 կրճատում՝ 257 տոննա/տարի
Հետգնման ժամկետ՝ 5 տարի

GEFF-ի ֆինանսավորումից օգտվելու համար Ձեր քայլերը՝

I. Ընտրե՛ք Ձեզ անհրաժեշտ տեխնոլոգիան բարձր արդյունավետությամբ **Կանաչ տեխնոլոգիաների ցանկից** **techselector.com/armenia** կամ այլ առաջարկներից

II. Ամփոփե՛ք **Ձեր ներդրման տեխնիկական և ֆինանսական պահանջները**

III. Դիմե՛ք **GEFF-ի Գործընկեր ֆինանսական կառույցին (ԳՖԿ)** ֆինանսավորում ստանալու համար **ebrdgeff.com/armenia/am/financing**

IV. Անհրաժեշտության դեպքում, ստացե՛ք **անվճար խորհրդատվություն** և նախագծի գնահատում GEFF-ի փորձառու մասնագետների կողմից

V. Ստացե՛ք **ֆինանսավորում վարկային կամ լիզինգի պայմանագրի կնքմամբ**

VI. Տեղադրե՛ք **համապատասխան տեխնոլոգիան**

VII. Օգտվե՛ք **էներգիայի խնայողությունից,** ինչպես նաև **ֆինանսական օգուտներից***

* Բիզնեսի սեփական կարիքները բավարարելու նպատակով իրականացված արևային էներգիայի ներդրումային ծրագրերը կարող են վարկի գումարի 20%-ի չափով պարգևավճար ստանալ: Պարգևավճարի համար նախատեսված ֆոնդը տրամադրվել է Կլիմայի ներդրումային ֆոնդերի (CIF) «Ավելացնելով վերականգնվող էներգիայի ներդրումները» (SREP) ծրագրի շրջանակներում:

Սիրով պատրաստ ենք պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

GEFF-ը Հայաստանում
ՀՀ, ք. Երևան | Հանրապետության 62 փողոց, բն. 101
armenia@ebrdgeff.com | +374 10 542 721 | www.ebrdgeff.com/armenia